ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԱՊՁԲ-20-9/35-8

ք. Երևան 29 -ը սեպտեմբերի 2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Գնորդ», մի կողմից և **«Մեդիփլաս» ՍՊԸ-ն,** ի դեմս տնօրեն **Ջ. Թալեբի Թոմաթրիի,** ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է ***6,530,000 (վեց միլիոն հինգ հարյուր երեսուն հազար)*** ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը՝ վճարեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է ***15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև 10.12.2020թ.:***

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար

առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.16 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչությունը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:**

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Մեդիփլաս» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	Ք.Երևան՝ Արաբկիր 33փ. Տ.17/5
ՀՀ ՖՆԱ գործառնական վարչություն	« ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 900011144129	Հ/Հ 163608013336
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 00210791
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ	տնօրեն
Ն. ՅՈՒԶԲԱՇՅԱՆ	Ք. ԹԱԼԵԲԻ ԹՈՄԱԴՐԻ

«ՄԵԴԻՓԼԱՍ» "MEDIPLUS" 00210791

Հ. Թալեբի

Լ/ա Հ. Ասպյան

Ա/ք 002756849

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-20-9/35-8 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/հ	Գնման ենթակա ապրանքների անվանումը	Տեխնիկական հատկանիշներ	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը
47.	Նեֆրոստոմիկ հավաքածու 10Fr	պարունակում է 1 հիդրոֆիլիկ ծածկույթով դրենաժ կատետր, 1 պունկցիոն ասեղ, 1 միացուցիչ խողովակ, Հաստությունը 10Fr, երկարությունը 40-42սմ: Ստերիլ, Միանվագ օգտագործման համար: Գործարանային փաթեթավորումով:	Նեֆրոստոմիկ հավաքածու 10Fr	Bioteq	Bioteq Թայվան	Bioteq Թայվան
48.	Նեֆրոստոմիկ հավաքածու 8Fr	պարունակում է 1 հիդրոֆիլիկ ծածկույթով դրենաժ կատետր, 1 պունկցիոն ասեղ, 1 միացուցիչ խողովակ, Հաստությունը 8Fr, երկարությունը 40-42սմ: Ստերիլ, Միանվագ օգտագործման համար: Գործարանային փաթեթավորումով:	Նեֆրոստոմիկ հավաքածու 8Fr	Bioteq	Bioteq Թայվան	Bioteq Թայվան
49.	Նեֆրոստոմիկ հավաքածու 12Fr	պարունակում է 1 հիդրոֆիլիկ ծածկույթով դրենաժ կատետր, 1 պունկցիոն ասեղ, 1 միացուցիչ խողովակ, Հաստությունը 12Fr, երկարությունը 40-42սմ: Ստերիլ, Միանվագ օգտագործման համար: Գործարանային փաթեթավորումով:	Նեֆրոստոմիկ հավաքածու 12Fr	Bioteq	Bioteq Թայվան	Bioteq Թայվան
50.	Նեֆրոստոմիկ հավաքածու 16Fr	պարունակում է 1 հիդրոֆիլիկ ծածկույթով դրենաժ կատետր, 1 պունկցիոն ասեղ, 1 միացուցիչ խողովակ, Հաստությունը 16Fr, երկարությունը 40-42սմ: Ստերիլ, Միանվագ օգտագործման համար: Գործարանային փաթեթավորումով:	Նեֆրոստոմիկ հավաքածու 16Fr	Bioteq	Bioteq Թայվան	Bioteq Թայվան
51.	Նեֆրոստոմիկ հավաքածու 14Fr	պարունակում է 1 հիդրոֆիլիկ ծածկույթով դրենաժ կատետր, 1 պունկցիոն ասեղ, 1 միացուցիչ խողովակ, Հաստությունը 14Fr, երկարությունը 40-42սմ: Ստերիլ, Միանվագ օգտագործման համար: Գործարանային փաթեթավորումով:	Նեֆրոստոմիկ հավաքածու 14Fr	Bioteq	Bioteq Թայվան	Bioteq Թայվան
53.	Շագանակագեղձի բացահատման մոնոպոլյար էլեկտրոդ 26 Fr	Շագանակագեղձի բացահատման և շագանակագեղձի ադենոման հեռացնելու համար նախատեսված մոնոպոլյար էլեկտրոդ 26 Fr: Համատեղելի է Storz մակնիշի ռեզեկտոսկոպի հետ: Ստերիլ: Նախատեսված է միանվագ օգտագործման համար: Գործարանային փաթեթավորմամբ:	Շագանակագեղձի բացահատման մոնոպոլյար էլեկտրոդ 26 Fr	Hagmed	Hagmed Լեհաստան	Hagmed Լեհաստան
54.	Շագանակագեղձի բացահատման բիպոլյար էլեկտրոդ 24 Fr	Շագանակագեղձի բացահատման և շագանակագեղձի ադենոման հեռացնելու համար նախատեսված բիպոլյար էլեկտրոդ 24Fr: Համատեղելի է Storz մակնիշի ռեզեկտոսկոպի հետ: Ստերիլ: Նախատեսված է միանվագ օգտագործման համար: Գործարանային փաթեթավորմամբ:	Շագանակագեղձի բացահատման բիպոլյար էլեկտրոդ 24 Fr	Hagmed	Hagmed Լեհաստան	Hagmed Լեհաստան
67.	Միզային Ֆոլլեյի կատետեր, սիլիկոնե, 3 ճյուղ, 20 Fr,	Սիլիկոնե կատետր 3ճյուղ, միանվագ օգտագործման համար, բալոնի ծավալը 30-50մլ երկարությունը 42-45սմ: հաստությունը 20Fr, ստերիլ, գործարանային փաթեթավորմամբ	Միզային Ֆոլլեյի կատետեր, սիլիկոնե, 3 ճյուղ, 20 Fr	Fortune Medical	Fortune Medical Թայվան	Fortune Medical Թայվան
68.	Միզային Ֆոլլեյի կատետեր, սիլիկոնե, 3 ճյուղ, 22 Fr,	Սիլիկոնե կատետր 3ճյուղ, միանվագ օգտագործման համար, բալոնի ծավալը 80-100մլ երկարությունը 42-45սմ: հաստությունը 22Fr, ստերիլ, գործարանային փաթեթավորմամբ	Միզային Ֆոլլեյի կատետեր, սիլիկոնե, 3 ճյուղ, 22 Fr	Fortune Medical	Fortune Medical Թայվան	Fortune Medical Թայվան

69.	Միզային Ֆոլեյի կատետեր, սիլիկոնե, 3 ճյուղ, 24 Fr,	Սիլիկոնե կատետր 3ճյուղ, միանվագ օգտագործման համար, բալոնի ծավալը 80-100մլ երկարությունը 42-45սմ: հաստությունը 24Fr, ստերիլ, գործարանային փաթեթավորմամբ	Միզային Ֆոլեյի կատետեր, սիլիկոնե, 3 ճյուղ, 24 Fr	Fortune Medical	Fortune Medical Թայվան	Fortune Medical Թայվան
70.	Ուղղորդիչ միզածորանի ստենտավորումների և նեֆրոստոմիաների համար	Նիտինոլե ծածկույթով ուղղորդիչ, որն օգտագործում են միզածորանի ստենտավորումների և նեֆրաստոմաների դեպքում: Երկարությունը առնվազն 150սմ, հաստությունը 0.035": Ծայրը փափուկ և ճկուն, որի շնորհիվ կատարվում է անվտանգ գործողություն:	– Ուղղորդիչ միզածորանի ստենտավորումների և նեֆրոստոմիաների համար	Bioteq	Bioteq Թայվան	Bioteq Թայվան
72.	Տրոակար-էպիցիստոստոմիկ հավաքածու,14Fr	Ցիստոստոմայի վերցայլքային պունկցիոն հավաքածու, լրակազմում, լատեքսային բալոնով 2 ճյուղ 14Fr PVC կատետր, համապատասխան տրոակար և նշտար:	Տրոակար-էպիցիստոստոմիկ հավաքածու,14Fr	Well Lead	Well Lead Չինաստան	Well Lead Չինաստան
73.	Տրոակար-էպիցիստոստոմիկ հավաքածու,16Fr	Ցիստոստոմայի վերցայլքային պունկցիոն հավաքածու, լրակազմում, լատեքսային բալոնով 2 ճյուղ 16Fr PVC կատետր, համապատասխան տրոակար և նշտար:	Տրոակար-էպիցիստոստոմիկ հավաքածու,16Fr	Well Lead	Well Lead Չինաստան	Well Lead Չինաստան

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈՒԶԲԱՇՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Մեդիփլաս» ՍՊԸ
տնօրեն

Հ. Թ... Ջ. ԹԱԼԵԲԻ ԹՈՄԱԹՐԻ

Լ/ա Հ. Սարյան

Հ/փ 002756849

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Գնման առարկայի						
չ/հ	անվանումը	չ/մ	քանակը	միավորի գինը (ՀՀ դրամ)	ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)	մատակարարումը 2020թ. 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 30.10.2020թ.
47.	Նեֆրոստոմիկ հավաքածու 10Fr	լրակազմ	20	29,000	580,000	20
48.	Նեֆրոստոմիկ հավաքածու 8Fr	լրակազմ	15	29,000	435,000	15
49.	Նեֆրոստոմիկ հավաքածու 12Fr	լրակազմ	30	29,000	870,000	30
50.	Նեֆրոստոմիկ հավաքածու 16Fr	լրակազմ	20	29,000	580,000	20
51.	Նեֆրոստոմիկ հավաքածու 14Fr	լրակազմ	30	29,000	870,000	30
53.	Շագանակագեղձի բացահատման մոնոպոլյար էլեկտրոդ 26 Fr	հատ	50	18,000	900,000	50
54.	Շագանակագեղձի բացահատման բիպոլյար էլեկտրոդ 24 Fr	հատ	15	30,000	450,000	15
67.	Միզային Ֆոլլեյի կատետեր, սիլիկոնե, 3 ճյուղ, 20 Fr	հատ	20	5,500	110,000	20
68.	Միզային Ֆոլլեյի կատետեր, սիլիկոնե, 3 ճյուղ, 22 Fr	հատ	20	5,500	110,000	20
69.	Միզային Ֆոլլեյի կատետեր, սիլիկոնե, 3 ճյուղ, 24 Fr	հատ	10	5,500	55,000	10
70.	Ուղղորդիչ միզածորանի ստենտավորումների և նեֆրոստոմիաների համար	հատ	20	26,000	520,000	20
72.	Տրոակար-էպիցիստոստոմիկ հավաքածու, 14Fr	լրակազմ	20	21,000	420,000	20
73.	Տրոակար-էպիցիստոստոմիկ հավաքածու, 16Fr	լրակազմ	30	21,000	630,000	30
Ընդամենը					**6,530,000**	

Ապրանքները պետք է ունենան.

1.Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները):

2.Արտադրողին տրված՝ արտադրության անվտանգության և որակի վերահսկման միջազգային հավաստագիր (ISO, GMP կամ այլ):

3.Արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի)՝ կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիր:

4.Պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների դեպքում՝ապրանքատեսակները հանձնման պահին պետք է ունենան առնվազն պիտանելիության ժամկետի 1/2-ը:

**թիվ 1,2,3 կետերով պահանջվող հավաստագրերի պատճենները ներկայացվում են ապրանքների մատակարարման ժամանակ*

5.Մատակարարման վայր սահմանել ք. Աբովյան, Արզնու խճուղի՝ կենտրոնական բազա:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Մեդիփլաս» ՍՊԸ
տնօրեն

Ջ. ԹԱԼԵԲԻ ԹՈՄԱԹՐԻ

հ/ա Հ. Հսրյան
էֆ 002 756849

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-20-9/35-8 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Գնման առարկայի			
հ/հ	CPV և ապրանքի անվանումները	CPV կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. 4-րդ եռամսյակ բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ., ընդ որում՝
47.	**Բժշկական այլ գործիքներ և պարագաներ բազմակոմպոնենտ**/Նեֆրոստոմիկ հավաքածու 10Fr/	33141223/15	580,000
48.	**Բժշկական այլ գործիքներ և պարագաներ բազմակոմպոնենտ**/Նեֆրոստոմիկ հավաքածու 8Fr/	33141223/16	435,000
49.	**Բժշկական այլ գործիքներ և պարագաներ բազմակոմպոնենտ**/Նեֆրոստոմիկ հավաքածու 12Fr/	33141223/17	870,000
50.	**Բժշկական այլ գործիքներ և պարագաներ բազմակոմպոնենտ**/Նեֆրոստոմիկ հավաքածու 16Fr/	33141223/18	580,000
51.	**Բժշկական այլ գործիքներ և պարագաներ բազմակոմպոնենտ**/Նեֆրոստոմիկ հավաքածու 14Fr/	33141223/19	870,000
53.	**Բժշկական այլ գործիքներ և պարագաներ**/Շագանակագեղձի բացահատման մոնոպոլյար էլեկտրոդ 26 Fr/	33141211/65	900,000
54.	**Բժշկական այլ գործիքներ և պարագաներ**/Շագանակագեղձի բացահատման բիպոլյար էլեկտրոդ 24 Fr	33141211/66	450,000
67.	**Բժշկական այլ գործիքներ և պարագաներ**/Միզային Ֆոլեյի կատետեր, սիլիկոնե, 3 ճյուղ, 20 Fr/	33141211/79	110,000
68.	**Բժշկական այլ գործիքներ և պարագաներ**/Միզային Ֆոլեյի կատետեր, սիլիկոնե, 3 ճյուղ, 22 Fr/	33141211/80	110,000
69.	**Բժշկական այլ գործիքներ և պարագաներ**/Միզային Ֆոլեյի կատետեր, սիլիկոնե, 3 ճյուղ, 24 Fr/	33141211/81	55,000
70.	**Բժշկական այլ գործիքներ և պարագաներ**/Ուղղորդիչ միզածորանի ստենտավորումների և նեֆրոստոմիաների համար/	33141211/82	520,000
72.	**Բժշկական այլ գործիքներ և պարագաներ բազմակոմպոնենտ**/Տրոակար-էպիցիստոստոմիկ հավաքածու,14Fr/	33141223/20	420,000
73.	**Բժշկական այլ գործիքներ և պարագաներ բազմակոմպոնենտ**/Տրոակար-էպիցիստոստոմիկ հավաքածու,16Fr/	33141223/21	630,000
Ընդամենը			**6,530,000**

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈՒԶՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Մեդիփլաս» ՍՊԸ
տնօրեն

Ջ. ԹԱԼԵԲԻ ԹՈՄԱԹՐԻ

Հավելված N 3
N ԳՀԱՊՁԲ-20-9/35-8 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԳՀԱՊՁԲ-20-9/35-8 պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն